

ԻՆՈՎԱՑԻՈՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Բ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ինովացիոն և Արդյունաբերական Զարգացման Հիմնադրամը (այսուհետ՝ «Հիմնադրամ») հիմնադրի կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություն է:

2. «Հիմնադրամն» ստեղծվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Հիմնադրամի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան և իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և սույն կանոնադրությամբ:

3. «Հիմնադրամի» անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «Ինովացիոն և Արդյունաբերական Զարգացման Հիմնադրամ»

հայերեն կրճատ՝ ԻԱԶՀ

ռուսերեն լրիվ՝ "Фонд инновационного и промышленного развития"

ռուսերեն կրճատ՝ ФИИР

անգլերեն լրիվ՝ "Innovation and Industry Development Fund"

անգլերեն կրճատ՝ IIDF:

4. «Հիմնադրամի» գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Արամի 32:

5. «Հիմնադրամի» գործունեության ժամկետը՝ անժամկետ:

II. «ՀԻՄՆԱԴՐԱՄԻ» ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՆ

2.1. «Հիմնադրամի» գործունեության հիմնական նպատակներն են՝

- «Հիմնադրամի» անդամներին աջակցության ցուցաբերում գործունեության համար,

- ինովացիոն և արդյունաբերական գործարարության զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծում,

- փոքր և միջին արդյունաբերական ձեռնարկությունների մրցունակության բարձրացում,

- փոքր, միջին և խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների միջև հարաբերությունների առավել արդյունավետ համագործակցության զարգացում:

2.2. «Հիմնադրամն» ունի քաղաքացիական իրավունք և կրում է կանոնադրական նպատակներն իրականացնելու պարտավորություններ, ինչպես նաև իրականացնում է հետևյալ տիպի գործունեություն՝

- ՀՀ և արտասահմանյան գործընկերների միջև արտադրական համագործակցության զարգացում,
- արտադրական համագործակցության տեղեկատվական տարածքի զարգացումը ՀՀ արդյունաբերական ձեռնարկությունների շահերից ելնելով,
- արտադրության կազմակերպման և ՀՀ գործարարների միջև համագործակցության ձևավորման արդիական և արդյունավետ մեթոդների մասսայականացում,
- արդյունաբերական և գործարար հարաբերությունների զարգացման ոլորտում իրականացնող կազմակերպությունների միջև փոխգործակցության կազմակերպում և համակարգում,
- գործարարության զարգացման և արդյունաբերության մրցունակության բարձրացման նպատակով համատեղ ծրագրերի իրագործում՝ կազմակերպությունների ներուժն օգտագործելով,
- միջազգային տեսական և գործնական փորձի տարածում և ընդհանրացում արդյունաբերության զարգացման և համագործակցության հարաբերությունների ձևավորման ոլորտում,
- մասնագետների վերապատրաստման կազմակերպումը համագործակցության, հարաբերությունների ձևավորման և արդյունաբերական զարգացման ոլորտում,
- միջազգային կազմակերպություններում, պետական կամ այլ մարմիններում «Հիմնադրամի» անդամների շահերի ներկայացումը,
- «Հիմնադրամի» նպատակային ծրագրերի իրագործմանն ուղղված ֆինանսական միջոցների կուտակում,
- արդյունաբերության ոլորտի փոքր և միջին գործարարության աջակցման և զարգացման ծրագրերի իրագործման և իրականացման նպաստում,
- մասնակցություն օրենսդրական գործունեությունում (համապատասխան մարմինների նախաձեռնական ծրագրերի կազմակերպում և ներկայացում, որոնք նպաստում են գործարարության զարգացմանը արդյունաբերությունում, օրինագծի եզրակացությունների պատրաստում),
- արտադրական համագործակցության զարգացման ոլորտային ծրագրերի իրականացման և մշակման աջակցություն, արդյունաբերության տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, արդյունաբերության բարեփոխում, փոքր և միջին ձեռնարկությունների անձնակազմի ուսուցում,
- ցուցահանդեսների և տոնավաճառների, այդ թվում՝ միջազգային, կազմակերպում և մասնակցություն,
- արտադրական հարաբերությունների շուկայի հետազոտման և մոնիտորինգի իրականացման մասնակցության հիման վրա խորհուրդների մշակում՝ կապված առավել գրավիչ արդյունաբերությունում ներդրումային ծրագրերի ընտրության հետ, արդյունաբերական արտադրության ոլորտում շուկայական ծրագրերի, կազմակերպչական, տեղեկատվական և այլ աջակցության ցուցաբերում,
- արդյունաբերության զարգացման և փոխհարաբերությունների ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպություններին տեղեկատվական, խորհրդատվական, մեթոդոլոգիական և այլ կարգի աջակցություն,

- սեմինարների, կլոր սեղանների, համաժողովների, ֆորումների և այլ միջոցառումների կազմակերպում, որոնք նպաստում են գործունեության նպատակների իրականացմանը,
 - ուսուցողական, մեթոդաբանական նյութերի մշակում և հրապարակում, ինչպես նաև հայրենական, արտասահմանյան մեթոդաբանական նյութերի թարգմանություն և հրապարակում՝ «Հիմնադրամի» գործունեության ուղղություններին համապատասխան,
 - «Հիմնադրամի» գործունեության հիմնական ուղղություններով համագործակցությունը արտասահմանյան և միջազգային կազմակերպությունների հետ,
 - «Հիմնադրամի» անդամների շահերից ելնելով տեղեկատվության փոխանակման կազմակերպումը,
 - «Հիմնադրամի» անդամների համար ուսումնական, գիտական և գործնական համաժողովների և սեմինարների, մասնագիտական փորձի փոխանակման այլ ձևերի կազմակերպում,
 - «Հիմնադրամի» անդամներին խորհրդատվական և այլ կարգի աջակցման ցուցաբերում,
 - «Հիմնադրամի» գործունեության հիմնական նպատակներին համապատասխան և գործող օրենսդրությամբ չարգելված այլ կարգի գործունեության իրականացում:
- 2.3. «Հիմնադրամը» իրավասու է իրականացնել նպատակներին համապատասխան ձեռնարկատիրական գործունեություն, որի համար և այն ստեղծված է:

III. «ՀԻՄՆԱԴՐԱՄԻ» ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

- 3.1. «Հիմնադրամը» պետական գրանցման պահից ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ:
- 3.2. «Հիմնադրամը» գործում է իրավաբանական անձի համար սահմանված օրենքներին համաձայն և կրում է համապատասխան պարտականություններ:
- 3.3. «Հիմնադրամն» ունի առանձնացված գույք, ինքնուրույն հաշվեկշիռ, Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների բանկերում հաշվարկային ու այլ հաշիվներ, իր անվանմամբ և Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով կնիք, դրոշմակնիք, ձևաթուղթ, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գրանցված այլ նշաններ:
- 3.4. «Հիմնադրամն» իր անունից կարող է ձեռք բերել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող: «Հիմնադրամն» իր պարտավորությունների համար պատասխանատու է սեփականության իրավունքով իրեն պատկանող ամբողջ գույքով:
- 3.5. «Հիմնադրամի» իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

3.6. «Հիմնադրամբ» կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն սույն կանոնադրությամբ սահմանված նպատակների իրականացման համար և դրանց համապատասխան:

3.7. «Հիմնադրամբ» ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար իրավունք ունի ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել դրանց մասնակից:

3.8. «Հիմնադրամբ» պատասխանատվություն չի կրում իր հիմնադրի պարտավորությունների, իսկ հիմնադիրը՝ հիմնադրամբի պարտավորությունների համար:

3.9. «Հիմնադրամբ» իրավունք ունի ստեղծելու առանձնացված ստորաբաժանումներ (ներկայացուցչություններ, մասնաճյուղեր) և հիմնարկներ:

IV. «ՀԻՄՆԱԴՐԱՄԻ» ԳՈՒՅՔԸ

4.1. «Հիմնադրամբ» կարող է տնօրինել տարածքներ, շենք և շինություն, բնակելի ֆոնդեր, սարքավորումներ, գույք, դրամական միջոցներ դրամով և արտարժույթով, արժեթղթեր և այլ գույք, ինչպես նաև հողային տարածքներ:

4.2. «Հիմնադրամբ» տիրապետում, օգտագործում և տնօրինում է իրեն պատկանող ու իր կողմից ձեռք բերված գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցներն իր գործունեության նպատակներին ու գույքի նշանակությանը համապատասխան:

4.3. «Հիմնադրամբ» գույքի (ներառյալ ֆինանսական միջոցները) գոյացման աղբյուրներն են՝

- «Հիմնադրամբ» անդամների կողմից կանոնավոր և միանվագ մուտքերը (դրամական ներդրումներ),
- կամավոր գույքային ներդրումները և նվիրատվությունները,
- աշխատանքների և ծառայությունների մատուցումից ստացված հասույթը,
- «Հիմնադրամբ» և իր ստեղծած կամ իր մասնակցությամբ տնտեսական ընկերությունների ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները,
- օրենքով չարգելվող այլ մուտքերը:

4.4. «Հիմնադրամբ» պատասխանատու է իր պարտավորություններով և իր գույքի այն մասով, որի նկատմամբ կարող է կիրառվել տուգանք:

4.5. Առաջին անդամավճարները վճարվում են «Հիմնադրամբ» ամեն անդամի կողմից, «Հիմնադրամբ» անդամ դառնալու պահին, որն էլ կոչվում է անդամակցության վճար: Երկրորդ և հաջորդ անդամավճարները վճարվում են «Հիմնադրամբ» յուրաքանչյուր անդամի կողմից՝ «Հիմնադրամբին» անդամակցելու տարվանից, օրացույցային առաջին ամսվա ընթացքում, որը հաջորդում է հաշվետու ֆինանսական տարվան:

4.6. Անդամավճարները վճարվում են դրամական միջոցներով՝ ՀՀ դրամով:

4.7. Անդամակցության և տարեկան անդամավճարները օգտագործվում են «Հիմնադրամբ» գործունեության և կանոնադրական նպատակներին հասնելու համար:

4.8. Նպատակային անդամավճարները նախատեսված են հատուկ միջոցառումների և ծրագրերի ֆինանսավորման համար: Դրանց մուտքագրման ժամկետները, չափը և ձևը սահմանվում են «Հիմնադրամի» կառավարիչ մարմնի կողմից:

4.9. «Հիմնադրամին» է պատկանում դրամական միջոցների, անշարժ և շարժական գույքի, սեփականության այլ օբյեկտների տնօրինման իրավունքը, որոնք փոխանցվել են անհատույց իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից անդամավճարի, նվերի, նվիրատվության, ժառանգության կամ այլ տեսքով:

4.10. «Հիմնադրամը» Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա բանկերում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է բացել հաշվարկային և այլ հաշիվներ (այդ թվում՝ արտարժույթային):

4.11. «Հիմնադրամը» պարտավոր է ամեն տարի հրապարակել հաշվետվություն իր սեփականություն հանդիսացող գույքի օգտագործման մասին:

V. «ՀԻՄՆԱԴՐԱՄԻ» ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

5.1. «Հիմնադրամի» կառավարման մարմիններն են հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը և հիմնադրամի կառավարիչը՝ գործադիր տնօրենը:

5.2. «Հիմնադրամի» կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը հոգաբարձուների խորհուրդն է:

5.3. Հոգաբարձուների խորհրդի նախագահին ընտրում են հոգաբարձուների խորհրդի անդամները, իսկ խորհրդի առաջին անհատական կազմը սահմանում է հիմնադիրը:

5.4. Հոգաբարձուների խորհրդի իրավասություններն են՝

ա) «Հիմնադրամի» ռազմավարական ծրագրի (ծրագրերի) հաստատումը,

բ) «Հիմնադրամի» բյուջեի և նրանում կատարվող փոփոխությունների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների և հիմնադրամի գործունեության տարեկան հաշվետվությունների հաստատումը,

գ) «Հիմնադրամի» գույքի տնօրինման կարգի հաստատումը,

դ) «Հիմնադրամի» վերակազմակերպման մասին որոշման ընդունումը,

ե) «Հիմնադրամի» հոգաբարձուների խորհրդի նոր անդամների ընտրությունը և «Հիմնադրամի» հոգաբարձուների խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը,

զ) հոգաբարձուների խորհրդի նախագահի, գործադիր տնօրենի և կանոնադրությամբ սահմանված այլ մարմինների ընտրության և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը,

է) սույն կանոնադրությամբ նախատեսված այլ մարմինների ձևավորումը,

ը) սույն կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, նոր խմբագրությամբ կանոնադրություն հաստատելու մասին որոշումների ընդունումը,

թ) տնտեսական ընկերությունների ստեղծման կամ դրանցում մասնակցության, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների (ներկայացուցչություններ, մասնաճյուղեր) և հիմնարկների ստեղծման ու դրանց կանոնադրությունների մասին որոշումների ընդունումը,

ժ) «Հիմնադրամի» ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը,

ժա) սույն կանոնադրությամբ սահմանված պարբերությամբ գործադիր տնօրենի հաշվետվությունների լսումը,

ժբ) իր որոշումների կատարման ընթացքի վերահսկումը,

ժգ) «Հիմնադրամի» աուդիտ իրականացնող անձի (աուդիտորի) ընտրությունը,

ժդ) օրենքով, սույն կանոնադրությամբ նախատեսված, ինչպես նաև «Հիմնադրամի» այլ մարմիններին չվերապահված այլ լիազորությունների իրականացումը:

5.5. Հոգաբարձուների խորհուրդը վերահսկողություն է իրականացնում «Հիմնադրամի» գույքի նպատակային օգտագործման, ինչպես նաև «Հիմնադրամի» գործադիր տնօրենի գործունեության նկատմամբ:

5.6. Հոգաբարձուների խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել հոգաբարձուների խորհրդի նախագահին կամ ընտրել նոր նախագահ իր անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

5.6.1. Խորհրդի նախագահը՝

1) կազմակերպում է հոգաբարձուների խորհրդի աշխատանքները, անհրաժեշտության դեպքում կարող է կազմավորել հոգաբարձուների խորհրդի ժամանակավոր հանձնախմբեր «Հիմնադրամի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի առաջին մասի 10-րդ կետով նախատեսված, հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկման (ստուգում, ուսումնասիրում և այլն) իրականացման և առաջին մասի 2-րդ, 3-րդ, 8-րդ և 9-րդ կետերով նախատեսված հարցերի նախնական քննարկման և դրանց վերաբերյալ հոգաբարձուների խորհրդին եզրակացություններ (տեղեկանքներ) ներկայացնելու համար,

2) գումարում է հոգաբարձուների խորհրդի նիստերը և նախագահում է դրանք,

3) կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը,

4) հոգաբարձուների խորհրդի քննարկմանն է ներկայացնում հոգաբարձուների խորհրդի անդամների լիազորությունների դադարեցման մասին որոշման նախագիծ սույն օրենքի 23-րդ հոդվածի երկրորդ մասի 2-րդ կետով նախատեսված դեպքերում:

5.6.2. Հոգաբարձուների խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները հոգաբարձուների խորհրդի որոշմամբ կատարում է անդամներից մեկը:

5.6.3. Հոգաբարձուների խորհրդի նիստերը գումարվում են ոչ պակաս, քան տարին մեկ անգամ հոգաբարձուների խորհրդի նախագահի կողմից:

Հոգաբարձուների խորհրդի նիստերը կարող են հրավիրվել նաև հոգաբարձուների խորհրդի անդամների 1/3-ի պահանջով հոգաբարձուների խորհրդի նախագահի կողմից համապատասխան պահանջը ներկայացնելուց 30 օրվա ընթացքում:

Հոգաբարձուների խորհրդի նիստերը կարող են անցկացվել էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ, ինչպես նաև հարցման կարգով:

Եթե նշված ժամկետում հոգաբարձուների խորհրդի նախագահը նիստ չի հրավիրում, ապա նիստ կարող են հրավիրել նման պահանջ ներկայացրած անձինք:

5.6.4. Հոգաբարձուների խորհրդի նախագահի լիազորությունները կանոնադրությամբ սահմանված կարգով և պայմաններով կարող են իրականացնել ընտրված համանախագահները:

5.7. «Հիմնադրամի» հոգաբարձուների խորհրդի անդամն իրավունք ունի՝

ա) ստանալու տեղեկություններ հիմնադրամի գործադիր տնօրենի կողմից «Հիմնադրամի» միջոցների օգտագործման մասին,

բ) հետևելու «Հիմնադրամի» գույքի պահպանմանը, ստուգելու «Հիմնադրամի» փաստաթղթերը, այդ թվում՝ հաշվեկշիռն, ինչպես նաև գործունեության այլ ոլորտներ,

գ) պահանջելու «Հիմնադրամի» գործադիր տնօրենից ու այլ աշխատողներից ցանկացած տվյալներ ու հաշվետվություն,

դ) ներկայացնելու առաջարկություններ այն կառավարող մարմիններին «Հիմնադրամի» աշխատանքները բարելավելու նպատակով,

ե) ստանալու սպառիչ տեղեկատվություն «Հիմնադրամի» գործունեության մասին,

զ) դուրս գալու հոգաբարձուների խորհրդից:

5.8. «Հիմնադրամի» հոգաբարձուների խորհրդի անդամը պարտավոր է՝

ա) հոգալ «Հիմնադրամի» հեղինակության բարձրացման մասին,

բ) աջակցել «Հիմնադրամի» ներդրումների համալրմանը,

գ) չխախտել հոգաբարձուների խորհրդի կանոնակարգի պահանջները:

5.9. «Հիմնադրամի» հոգաբարձուների խորհրդի անդամը կարող է ունենալ օրենքով, սույն կանոնադրությամբ և խորհրդի կանոնակարգով սահմանված այլ իրավունքներ և կրել այլ պարտականություններ: «Հիմնադրամի» գործադիր մարմինը հիմնադրամի գործադիր տնօրենն է, որը վարում է հիմնադրամի ընթացիկ գործերը և հաշվետու է հոգաբարձուների խորհրդին:

5.9.1. «Հիմնադրամի» գործադիր տնօրենը՝

ա) առանց լիազորագրի գործում է «Հիմնադրամի» անունից,

բ) «Հիմնադրամը» ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,

գ) տնօրինում է «Հիմնադրամի» գույքը՝ ներառյալ ֆինանսական միջոցները՝ համաձայն հոգաբարձուների խորհրդի հաստատված բյուջեի,

դ) կնքում է պայմանագրեր (այդ թվում՝ աշխատանքային),

ե) բացում է բանկային հաշիվներ,

զ) սահմանում է աշխատողների աշխատանքի վարձատրության չափը,

է) կատարում է աշխատանքի բաշխում աշխատողների միջև,

ը) տալիս է լիազորագրեր,

թ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունից և սույն կանոնադրությունից բխող այլ լիազորություններ:

5.9.2. Գործադիր տնօրենն այլ կազմակերպություններում կարող է վճարովի պաշտոններ զբաղեցնել միայն հոգաբարձուների խորհրդի համաձայնությամբ:

5.9.3. Հոգաբարձուների խորհուրդն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծել գործադիր տնօրենի հետ կնքված պայմանագիրը՝ օրենքով, հիմնադրամի կանոնադրությամբ և տվյալ պայմանագրով սահմանված կարգով:

VI. «ՀԻՄՆԱՂՐԱՄԻ» ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ

6.1. «Հիմնադրամի» կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև այլ իրավասու պետական մարմիններ իրենց իրավասությունների, ստուգումների ու ուսումնասիրությունների՝ օրենքով նախատեսված ընթացակարգերին համապատասխան:

6.2. «Հիմնադրամի» կողմից օրենքների պահանջների այնպիսի խախտումներ հայտնաբերվելու դեպքում (որոնք կարող են վերացվել «Հիմնադրամի» ձեռնարկած միջոցառումներով) վերահսկողություն իրականացնող կամ պետական լիազորված մարմինը «Հիմնադրամ» է ուղարկում գրավոր նախազգուշացում՝ առաջարկելով խախտումների վերացման կարգն ու ժամկետ-ները:

6.3. «Հիմնադրամն» օրենքով սահմանված հաշվետվությունը հրապարակելուց հետո՝ 15 օրվա ընթացքում, դրա մասին գրավոր ծանուցում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը:

6.4. Սահմանված ժամկետում հաշվետվությունը թերի հրապարակվելու դեպքում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը «Հիմնադրամ» է ուղարկում գրավոր նախազգուշացում՝ առաջարկելով մեկամյա ժամկետում վերացնել թերությունները: Սահմանված ժամկետում հաշվետվությունը չհրապարակելու կամ նախազգուշացման պահանջները չկատարելու դեպքում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը կարող է դիմել դատարան «Հիմնադրամը» լուծարելու պահանջով:

VII. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1. «Հիմնադրամը» Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և ներկայացնում է ֆինանսական ու վիճակագրական հաշվետվություններ:

7.2. «Հիմնադրամի» հաշվապահական հաշվետվությունը կազմվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

VIII. «ՀԻՄՆԱՊՐԱՄԻ» ՎԵՐԱԿԱԳՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

8.1. «Հիմնադրամի» վերակազմակերպումը

8.1.1. «Հիմնադրամի» կարող է վերակազմակերպվել միայն հիմնադրամի՝ այլ հիմնադրամին միացման կամ այլ հիմնադրամի հետ միաձուլման ձևով, եթե դա նախատեսված է կանոնադրությամբ:

8.1.2. «Հիմնադրամի» վերակազմակերպումը կատարվում է հիմնադիրների միաձայն որոշմամբ: «Հիմնադրամի» կանոնադրությամբ նախատեսված լինելու դեպքում «Հիմնադրամի» վերակազմակերպումը կարող է կատարվել նաև հոգաբարձուների խորհրդի որոշմամբ:

8.1.3. «Հիմնադրամի» միաձուլման ձևով վերակազմակերպվելիս վերակազմակերպված է համարվում նոր ստեղծված «Հիմնադրամի» պետական գրանցման պահից:

8.1.4. «Հիմնադրամի» այլ հիմնադրամի հետ միացման ձևով վերակազմակերպվելիս համարվում է վերակազմակերպված՝ միացած «Հիմնադրամի» գործունեությունը դադարելու վերաբերյալ պետական գրանցման պահից:

8.1.5. «Հիմնադրամի» վերակազմակերպման մասին որոշումն ընդունելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, «Հիմնադրամի» պարտավոր է այդ մասին գրավոր ծանուցել իր բոլոր պարտատերերին: Ծանուցումը պետք է պարունակի տեղեկություններ՝ վերակազմակերպման մասին որոշումն ընդունելու տարվա, ամսվա, ամսաթվի, վերակազմակերպման ձևի և մասնակիցների, ինչպես նաև «Հիմնադրամի» պարտավորությունների իրավահաջորդության մասին:

8.1.6. Վերակազմակերպման մասին ծանուցման պահից 30 օրվա ընթացքում վերակազմակերպվող հիմնադրամի պարտատերն իրավունք ունի «Հիմնադրամից» պահանջել պարտավորությունների կատարման լրացուցիչ երաշխիքներ, պարտավորությունների դադարեցում կամ վաղաժամկետ կատարում, ինչպես նաև վնասների հատուցում:

8.2. «Հիմնադրամների» միաձուլումը

8.2.1. «Հիմնադրամների» միաձուլում է համարվում նոր «Հիմնադրամի» ստեղծումը՝ նրան երկու կամ ավելի միաձուլվող հիմնադրամների իրավունքների և պարտականությունների փոխանցմամբ և միաձուլվող հիմնադրամների դադարմամբ:

8.2.2. Միաձուլվող հիմնադրամները կնքում են միաձուլման մասին պայմանագիր: Միաձուլման ձևով վերակազմակերպման մասին որոշումը պետք է հաստատի նաև միաձուլման պայմանագիրը, փոխանցման ակտը, միաձուլման կարգն ու պայմանները:

8.2.3. Միաձուլման արդյունքում ստեղծվող «Հիմնադրամի» հիմնադրելու որոշումը կայացնում են միաձուլվող հիմնադրամների բոլոր հիմնադիրները սույն օրենքով սահմանված կարգով միաձուլման պայմանագրում նշված ժամկետներում: Որոշմամբ պետք է հաստատվեն նաև միաձուլման պայմանագիրը (պայմանագրերը) և փոխանցման ակտերը:

8.2.4. «Հիմնադրամների» միաձուլման դեպքում դրանցից յուրաքանչյուրի իրավունքները և պարտականությունները փոխանցվում են նոր ստեղծված հիմնադրամին՝ փոխանցման ակտին համապատասխան:

8.2.5. Միաձուլմամբ պայմանավորված պետական գրանցումների կատարման նպատակով միաձուլման պայմանագիրը, փոխանցման ակտերը և օրենքով սահմանված մյուս անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվում են իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմին:

8.3. «Հիմնադրամների» միացումը

8.3.1. Հիմնադրամների միացում է համարվում մեկ կամ մի քանի հիմնադրամների գործունեության դադարումը՝ դրանց իրավունքների և պարտականությունների փոխանցմամբ այլ հիմնադրամի:

8.3.2. Միացմանը մասնակցող հիմնադրամները կնքում են միացման մասին պայմանագիր: Միացման ձևով վերակազմակերպման մասին որոշումը պետք է հաստատի նաև միացման պայմանագիրը, փոխանցման ակտը, միացման կարգն ու պայմանները:

8.3.3. Միացման հետևանքով ընդլայնված «Հիմնադրամի» հոգաբարձուների խորհուրդը որոշումներ է ընդունում միացման հետևանքով ընդլայնված «Հիմնադրամի» կանոնադրության մեջ անհրաժեշտ փոփոխություններ և լրացումներ կատարելու, միացման պայմանագիրը և փոխանցման ակտը հաստատելու մասին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև այլ հարցերի մասին:

8.3.4. Հիմնադրամների միացման դեպքում միացած հիմնադրամներից յուրաքանչյուրի իրավունքները և պարտականությունները փոխանցվում են միացման հետևանքով ընդլայնված «Հիմնադրամին»՝ փոխանցման ակտին համապատասխան:

8.3.5. Միացմամբ պայմանավորված պետական գրանցումների կատարման նպատակով միացման պայմանագիրը (պայմանագրերը), փոխանցման ակտը (ակտերը) և օրենքով սահմանված մյուս անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվում են իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմին:

8.4. Միաձուլման (միացման) պայմանագիրը

8.4.1. Միաձուլման (միացման) պայմանագիրը կնքվում է միաձուլմանը (միացմանը) մասնակցող հիմնադրամների միջև, ստորագրում են կառավարիչները և ենթակա է հաստատման վերակազմակերպման մասին որոշմամբ:

8.4.2. Միաձուլման (միացման) պայմանագիրը պետք է բովանդակի՝

- 1) մասնակից կողմերի անվանումը, գտնվելու վայրը, պետական գրանցման տվյալները,
- 2) միաձուլման (միացման) ժամկետները, կարգը և պայմանները,
- 3) միացման հետևանքով ընդլայնված «Հիմնադրամի» հոգաբարձուների խորհրդի նիստի գումարման ժամկետը, հրավիրման և անցկացման կարգը կամ միաձուլման արդյունքում ստեղծվող հիմնադրամը հիմնադրելու որոշման կայացման ժամկետը,

4) այլ տեղեկություններ՝ միաձուլմանը (միացմանը) մասնակցող կողմերի հայեցողությամբ:

8.5. Փոխանցման ակտը

Փոխանցման ակտը պետք է դրույթներ պարունակի վերակազմակերպված «Հիմնադրամի» (հիմնադրամների) գույքի և պարտատերերին ու պարտապաններին վերաբերող բոլոր պարտավորությունների իրավահաջորդության մասին, ներառյալ՝ վիճարկվող պարտավորությունները:

8.6. «Հիմնադրամի» լուծարումը

8.6.1. Լուծարումը հիմնադրամի գործունեության դադարումն է առանց նրա իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

8.6.2. «Հիմնադրամը» լուծարելու մասին որոշում կարող է ընդունել միայն դատարանը շահագրգիռ անձանց դիմումով:

8.6.3. «Հիմնադրամը» կարող է լուծարվել, եթե

- 1) «Հիմնադրամի» գույքը բավարար չէ նրա գործունեության իրականացման համար և անհրաժեշտ գույք ստանալու հնարավորությունն իրական չէ,
- 2) իր գործունեությամբ «Հիմնադրամը» շեղվել է կանոնադրությամբ նախատեսված նպատակներից,
- 3) հնարավոր չէ հասնել «Հիմնադրամի» նպատակներին և կատարել այդ նպատակների փոփոխություններ,
- 4) «Հիմնադրամի» գործունեությունը վտանգում է պետական և հասարակական անվտանգությունը, հասարակական կարգը, հանրության առողջությունն ու բարքերը, այլոց իրավունքներն ու ազատությունները,
- 5) «Հիմնադրամը» թույլ է տվել օրենքի բազմակի կամ կոպիտ խախտումներ կամ պարբերաբար իրականացրել է իր կանոնադրական նպատակներին հակասող գործունեություն,
- 6) «Հիմնադրամը» ստեղծելիս հիմնադիրը թույլ է տվել օրենքի էական խախտումներ կամ կեղծիքներ,
- 7) «Հիմնադրամը» կարող է լուծարվել նաև սույն օրենքով նախատեսված այլ դեպքերում:

8.7. «Հիմնադրամի» լուծարման կարգը

8.7.1. Դատարանի կողմից «Հիմնադրամի» լուծարման մասին որոշում ընդունելուց հետո «Հիմնադրամի» հոգաբարձուների խորհուրդը նշանակում է լուծարման հանձնաժողով (լուծարող) և, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Հիմնադրամի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և սույն կանոնադրության համաձայն սահմանում է լուծարման կարգը և ժամկետները:

8.7.2. Լուծարման հանձնաժողովի նշանակման պահից նրան են անցնում հիմնադրամի գործերի կառավարման լիազորությունները: Լուծարվող հիմնադրամի անունից դատարանում հանդես է գալիս լուծարման հանձնաժողովը:

8.7.3. Լուծարման գործընթացում գտնվելու մասին տեղեկությունները (լուծարման գործընթացի սկիզբը և ավարտը, լուծարման հանձնաժողովի կազմը) գրառվում են իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում լուծարման հանձնաժողովի դիմումի հիման վրա:

8.7.4. Լուծարման հանձնաժողովն իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում հայտարարություն է զետեղում «Հիմնադրամի» լուծարման և պարտատերերի պահանջների ներկայացման կարգի ու ժամկետի մասին: Այդ ժամկետը չի կարող պակաս լինել երկու ամսից՝ սկսած լուծարման մասին հրապարակման պահից, որը համարվում է «Հիմնադրամի» լուծարման գործընթացի սկիզբ:

8.7.5. Լուծարման հանձնաժողովն իրականացնում է գույքի վերագնահատումը, միջոցներ է ձեռնարկում պարտատերերի հայտնաբերման և դեբիտորական պարտքերի ստացման ուղղությամբ, ինչպես նաև տեղեկացնում է պարտատերերին «Հիմնադրամի» լուծարման մասին:

8.7.6. Լուծարման ընթացքում «Հիմնադրամն» իրավունք ունի կնքել նոր գործարքներ և ստանձնել նոր պարտավորություններ միայն իր պարտավորությունները կատարելու համար անհրաժեշտ ընթացիկ գործունեությունն ավարտելու անհրաժեշտության դեպքում:

8.7.7. Պարտատերերի կողմից պահանջներ ներկայացնելու ժամկետն ավարտվելուց հետո լուծարման հանձնաժողովը կազմում է միջանկյալ լուծարման հաշվեկշիռ, որը տեղեկություններ է պարունակում լուծարվող «Հիմնադրամի» գույքի կազմի, պարտատերերի ներկայացրած պահանջների ցանկի, ինչպես նաև պահանջների քննարկման արդյունքների մասին:

8.7.8. Միջանկյալ լուծարման հաշվեկշիռը հաստատում է «Հիմնադրամի» հոգաբարձուների խորհուրդը:

8.7.9. Միջանկյալ լուծարման հաշվեկշռի հաստատվելուց հետո, եթե լուծարվող «Հիմնադրամի» ունեցած դրամական միջոցներն անբավարար են պարտատերերի պահանջները բավարարելու համար, լուծարման հանձնաժողովը, սույն օրենքով սահմանված կարգով, հրապարակային սակարկություններով իրականացնում է «Հիմնադրամի» գույքի վաճառքը:

8.7.10. Լուծարման հանձնաժողովը լուծարվող «Հիմնադրամի» պարտատերերին վճարումներ է կատարում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 70-րդ հոդվածով սահմանված հերթականությամբ և միջանկյալ լուծարման հաշվեկշռին համապատասխան՝ սկսած դրա հաստատման պահից:

8.7.11. Պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին «Հիմնադրամը» չունի պարտավորություններ պարտատերերի նկատմամբ, գույքն ուղղվում է «Հիմնադրամի» կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ փոխանցվում է պետական բյուջե:

8.7.12. «Հիմնադրամի» գույքի ամբողջական բաշխումն իրականացնելուց հետո լուծարման հանձնաժողովը կազմում է լուծարման հաշվեկշիռ և ներկայացնում «Հիմնադրամի» հոգաբարձուների խորհրդի հաստատմանը: Լուծարման հանձնա-

Ժողովը «Հիմնադրամի» հոգաբարձուների խորհրդի հաստատած լուծարման հաշվեկշիռը ներկայացնում է դատարանի հաստատմանը:

8.7.13. Լուծարման հանձնաժողովը հաստատված լուծարման հաշվեկշիռն օրենքով սահմանված մյուս փաստաթղթերի հետ ներկայացնում է իրավաբանական անձանց պետական ռեգիստր «Հիմնադրամի» լուծարման պետական գրանցում կատարելու համար:

8.7.14. Պետական գրանցման պահից «Հիմնադրամի» լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գոյությունը՝ դադարած:

8.7.15. «Հիմնադրամի» հոգաբարձուների խորհրդի կողմից սույն հոդվածի առաջին, ութերորդ և տասներկուերորդ մասերով սահմանված իր լիազորությունները երկամսյա ժամկետում (համապատասխանաբար դատարանի կողմից որոշման ընդունման, լուծարման հանձնաժողովի կողմից լուծարման միջանկյալ հաշվեկշռի և լուծարման հաշվեկշռի ներկայացման պահից) չկատարելու դեպքում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը «Հիմնադրամի» լուծարման հետ կապված լիազորությունների իրականացման նպատակով երկամսյա ժամկետում նշանակում է ժամանակավոր խորհուրդ: